ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սոցիոլոգիայի մասնագիտություն | դպրոցական օլիմպիադա

1. Ընդհանուր տեղեկություն

Սույն փաստաթուղթը սահմանում է **Սոցիոլոգիա** մասնագիտությունից դպրոցական օլիմպիադայի առաջադրանքների կառուցվածքը, մասնակցության ընդհանուր կանոնները, առաջադրանքների կատարման կարգը:

Օլիմպիադայի նպատակը աշակերտների՝

- սոցիալական երևույթները հասկանալու,
- հասարակական կյանքի խնդիրները վերլուծելու,
- սեփական տեսակետը հիմնավորելու,
- սոցիոլոգիական մտածողություն դրսևորելու կարողությունների բացահայտումն է:

2. Առաջադրանքը

Առաջադրանքը բաղկացած է **երկու մասից**՝

Մաս I. Թեստ

- Ընդհանուր՝ **50 թեստային հարց**
- Յուրաքանչյուր հարցի համար տրվում է պատասխանների տարբերակներ
- Մասնակիցը պետք է ընտրի մեկ ճիշտ պատասխան

Մաս II. Էսսե

- Մասնակիցը պետք է ընտրի առաջարկված թեմաներից **մեկը**
- Էսսեն պետք է ներկայացնի թեմայի սոցիալական մեկնաբանություն, հիմնավորված տեսակետ և համապատասխան օրինակներ

3. Կատարման տևողությունը

Օլիմպիադայի ընդհանուր տևողությունը կազմում է **150 րոպե**:

- Թեստային մաս՝ **60 րոպե**
- Էսսեի մաս՝ **90 րոպե**

4. Հրահանգներ մասնակիցներին

1. Ուշադիր կարդացե՛ք բոլոր առաջադրանքները:
2. Թեստային հարցերին պատասխանելիս նշե՛ք միայն այն տարբերակը, որը համարում եք ճիշտ:
3. Էսսեի համար ընտրե՛ք միայն **մեկ թեմա**:
4. Էսսեն պետք է լինի ինքնուրույն, տրամաբանական, կառուցվածքային և թեմային համապատասխան:
5. Ձեր շարադրանքում ցանկալի է՝
    - ներկայացնել խնդրի սոցիալական իմաստը,
    - արտահայտել անձնական, բայց հիմնավորված տեսակետ,
    - բերել օրինակներ առօրյա կյանքից, դպրոցից, ընտանիքից, համայնքից կամ հասարակական կյանքից:
6. Չի թույլատրվում օգտվել բջջային հեռախոսից, ինտերնետից կամ այլ օժանդակ նյութերից:
7. Աշխատանքը պետք է գրված լինի հստակ, ընթեռնելի և գրական հայերենով:

5. Թեստային առաջադրանքի ձևաչափը

Թեստային մասը ներառում է սոցիոլոգիայի հիմնական ոլորտներին վերաբերող հարցեր, այն հիմնված է դպրոցական ուսումնական նյութի վրա: Հաշվի եռ առնվել «» դասընթացները

Թեստային հարցերի ընդհանուր քանակը՝ 50 (տե՛ս հավելված 1)

6. Էսսեի առաջադրանք

Ընդհանուր առաջադրանք

Ընտրե՛ք թեմաներից մեկը և գրե՛ք էսսե՝ ներկայացնելով Ձեր դիրքորոշումը, սոցիոլոգիական դիտարկումները և հիմնավորումները: Ձեր շարադրանքում փորձե՛ք ոչ միայն արտահայտել անձնական կարծիք, այլև ցույց տալ, թե ինչպես է տվյալ երևույթը դրսևորվում հասարակական կյանքում: Օգտագործե՛ք առօրյա կյանքի, դպրոցի, ընտանիքի, համայնքի կամ մեդիայի օրինակներ:

Էսսեի թեմաները՝

1. **Դպրոցը որպես փոքր հասարակություն**
   Վերլուծե՛ք դպրոցը՝ որպես հասարակության փոքր մոդել: Ի՞նչ սոցիալական հարաբերություններ, կանոններ, դերեր և անհավասարություններ են ձևավորվում դպրոցում և ինչպե՞ս են դրանք արտացոլում ավելի լայն հասարակական գործընթացները:

2. **Սոցիալական անհավասարությունը սկսվո՞ւմ է առօրյայից**
   Քննարկե՛ք, թե սոցիալական անհավասարությունն ինչպես կարող է արտահայտվել մարդկանց առօրյա կյանքում: Արդյո՞ք անհավասարությունը միայն եկամուտների տարբերությունն է, թե՞ այն տեսանելի է նաև կրթության, վերաբերմունքի, հնարավորությունների և մասնակցության մեջ:

3. **Հասարակական կարծիք. ազատ ընտրությո՞ւն, թե՞ անտեսանելի ճնշում**
   Վերլուծե՛ք հասարակական կարծիքի ազդեցությունը անհատի ընտրությունների վրա: Արդյո՞ք մարդը միշտ ազատ է իր որոշումների մեջ, թե՞ հաճախ առաջնորդվում է շրջապատի սպասումներով, գնահատականներով և ճնշմամբ:

4. **Սոցիալական ցանցերում ինքնության կառուցումը**
   Քննարկե՛ք, թե ինչպես են սոցիալական ցանցերը ազդում մարդու ինքնության ներկայացման և ձևավորման վրա: Արդյո՞ք թվային միջավայրում մարդիկ ներկայացնում են իրենց իրական կերպարը, թե՞ ստեղծում են հասարակական սպասումներին համապատասխան նոր ինքնություններ:

5. **Քաղաքային կյանքը և միայնության պարադոքսը**
   Վերլուծե՛ք, թե ինչու մեծ քաղաքներում, որտեղ մարդիկ մշտապես շրջապատված են ուրիշներով, հաճախ առաջանում է միայնության զգացում: Բացատրե՛ք այս երևույթը սոցիալական կապերի, քաղաքային կյանքի ռիթմի և ժամանակակից հասարակության առանձնահատկությունների տեսանկյունից:

6. **Արդյո՞ք ավանդույթը խոչընդոտում է փոփոխությանը**
   Քննարկե՛ք ավանդույթի և փոփոխության հարաբերությունը հասարակության մեջ: Արդյո՞ք ավանդույթները խոչընդոտում են նորարարությանը և զարգացմանը, թե՞ կարող են նաև նպաստել հասարակական կայունությանը և ինքնության պահպանմանը:

7. **Երիտասարդությունը փոփոխությունների շարժիչ, թե՞ սոցիալական սպասումների կրող**
   Վերլուծե՛ք երիտասարդության դերը հասարակության մեջ: Արդյո՞ք երիտասարդները հիմնականում հանդիսանում են փոփոխությունների նախաձեռնողներ, թե՞ ավելի շատ կրում և վերարտադրում են հասարակության կողմից իրենց նկատմամբ ձևավորված սպասումները:

8. **Կրթությունը որպես սոցիալական շարժունության հնարավորություն**
   Քննարկե՛ք կրթության դերը մարդու սոցիալական դիրքի փոփոխության հարցում: Արդյո՞ք կրթությունը կարող է իրականում հավասար հնարավորություններ ստեղծել, թե՞ դրա ազդեցությունը սահմանափակվում է սոցիալական այլ պայմաններով:
9. **Կարծրատիպերի իշխանությունը առօրյա կյանքում**
   Վերլուծե՛ք, թե ինչպես են կարծրատիպերը ձևավորվում և ազդում մարդկանց առօրյա հարաբերությունների, որոշումների և վերաբերմունքների վրա: Ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ դրանք անհատի և հասարակության համար:
10. **Համերաշխություն ճգնաժամի պայմաններում**
    Քննարկե՛ք, թե ինչ դեր ունի համերաշխությունը հասարակության մեջ ճգնաժամային իրավիճակներում: Ինչպե՞ս են մարդիկ, խմբերը և համայնքները միավորվում դժվար պահերին և ինչո՞ւ է այդ միասնությունը կարևոր հասարակական կայունության համար:

7. Էսսեի ձևական պահանջներ

- Առաջարկվող ծավալը՝ **400–700 բառ**
- Էսսեն պետք է ունենա՝
  - ներածություն,
  - հիմնական մաս,
  - եզրակացություն
- Խրախուսվում է փաստարկված խոսքը, օրինակների կիրառումը և տրամաբանական շարադրանքը
- Չի խրախուսվում միայն ընդհանուր, չհիմնավորված դատողությունների ներկայացումը

Հավելված 1: ՀՀ հանրակրթական դպրոցների դասագրքերում պարունակվող նյութի հիման վրա կազմված թեստ

1. **Ամերիկացի հոգեբան Աբրահամ Մասլոուն պահանջմունքների աստիճանակարգման բուրգում առաջնային պահանջմունք է համարում.**
   ա. Պաշտպանվածության/անվտանգության պահանջմունքը
   բ. Ինքնաակտուալիզացիա կամ ինքնադրսևորման պահանջմունքը
   գ. Ֆիզիոլոգիական պահանջմունքը
   դ. Սիրո և սոցիալական պատկանելիության պահանջմունքը

2. **Ամերիկացի հոգեբան Աբրահամ Մասլոուի կողմից մշակված պահանջմունքների աստիճանակարգում բուրգում ներառված չէ.**
   ա. Պաշտպանվածության/անվտանգության պահանջմունքը
   բ. Ինքնաակտուալիզացիա կամ ինքնադրսևորման պահանջմունքը
   գ. Ագրեսիայի պահանջմունքը
   դ. Սիրո և սոցիալական պատկանելիության պահանջմունքը

3. **Կարգավիճակով պայմանավորված վարքը ենթադրում է.**
   ա. Իրավունքներ
   բ. Պարտականություններ
   գ. Իրավունքների և պարտականությունների հարաբերակցություն
   դ. Թվարկվածներից ոչ մեկը

4. **Սոցիալական գիտությունների տեսանկյունից ընտանիքը.**
   ա. Սոցիալական կառույց է
   բ. *Սոցիալական կառույց է և սոցիալական խումբ*
   գ. Սոցիալական խումբ է
   դ. Հարաբերությունների հատուկ ձև է

5. **Կոնֆլիկտները բարդ և բազմաձև դրսևորումներ ունեցող.**
   ա. Հոգեբանական երևույթներ են
   բ. *Սոցիալ-հոգեբանական երևույթներ են*

գ. Սոցիալական երևույթներ են

դ. Նշվածներից ոչ մեկը

6. Կոնֆլիկտի առարկա է կոչվում.

ա. Կոնֆլիկտի առաջացման պատճառը

բ. Կոնֆլիկտի հարթումը

գ. Կոնֆլիկտի կողմը

դ. Կոնֆլիկտի զարգացման ընթացքը

7. Երբ անձը ձգտում է կոնֆլիկտը հարթել, համագործակցել, նպատակ ունի փնտրելու ընդունելի լուծումներ, աչքի է ընկնում զսպվածությամբ, դիմացինի նկատմամբ բարյացակամությամբ, անկեղծությամբ, ապա ցուցաբերում է.

ա. Ապակառուցողական վարք

բ. Կոնֆորմիստական վարք

գ. Կառուցողական վարք

դ. Նշվածներից և ոչ մեկը

8. Երբ անձը մշտապես պասիվ դիրքում է գտնվում, հակված է զիջման, շատ արագ համոզվում է, համաձայնվում է հակադիր կողմի հետ, խուսափում է սուր հարցերից, ապա ցուցաբերում է.

ա. Կառուցողական վարք

բ. Կոնֆորմիստական վարք

գ. Ապակառուցողական վարք

դ. Նշվածներից և ոչ մեկը

9. Հասարակական աշխարհագրության ուսումնասիրության առարկան.

ա. Տարածքային զուգակցություններն են

բ. Միայն գյուղական և քաղաքային համակարգերն են

գ. Միայն գյուղատնտեսական ձեռնարկություններն են

դ. Միայն արդյունաբերական ձեռնարկություններն են

10. Պետության խմբավորման քանակական ցուցանիշ է հանդիսանում.

ա. Բնակչության թիվը

բ. Աշխարհագրական դիրքը

գ. Տարածքի չափը

դ. *Բնակչության թիվը և տարածքի չափը*

11. Պետության խմբավորման որակական հատկանիշներ են.

ա. Տնտեսական ու քաղաքական դերը

բ. Պետական կառավարման ձևը

գ. Պետական կառուցվածքը

դ. *Բոլոր թվարկվածները*

12. Պետություններն ըստ տարածքային կառուցվածքի (ըստ տարածքային կազմակերպման) լինում են.

ա. Միասնական

բ. Դաշնային

գ. Միապետություն

դ. *Միասնական և դաշնային*

13. Հասարակության գլխավոր արտադրող ուժն է.

ա. Փողը

բ. Տնտեսությունը

գ. Գյուղատնտեսական ձեռնարկությունները

դ. *Բնակչությունը*

14. Բնակչության թվի արագ աճի հետևանքով առաջանում է բնապահպանական խնդիր, այն է.

ա. Բնակչության թվի արագ աճը բարենպաստ է երկրագնդի համար և ոչ մի խնդիր չի առաջացնում

բ. Ավելանում է աղտոտման ծավալը

գ. *Սպառվում են երկրագնդի բնական ռեսուրսները և ավելանում է աղտոտման ծավալը*

դ. Սպառվում են երկրագնդի բնական ռեսուրսները

15. Ծնելիության մակարդակը պայմանավորված է.

ա. Բնակչության բարեկեցությամբ և կրթվածությամբ,

բ. Հասարակության մեջ կնոջ դերով

գ. Բնակչության սեռատարիքային կազմով, ազգային ավանդույթներով

դ. *Ճիշտ են բոլոր տարբերակները*

16. Այն քաղաքականությունը, որն իրականացվում է վարչական, տնտեսական, քարոզչական և այլ միջոցառումների միջոցով, որոնց օգնությամբ պետությունն իր համար ցանկալի ուղղությամբ ներգործում է բնական շարժի վրա կոչվում է.

ա. Սոցիալական քաղաքականություն

բ. Վիճակագրական քաղաքականություն

գ. *Ժողովրդագրական քաղաքականություն*

դ. Տնտեսական քաղաքականություն

17. Էմիգրացիան իրենից ներկայացնում է.

ա. Մեկ այլ երկիր մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու նպատակով որևէ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը

բ. Որևէ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ելքը տվյալ երկրից

գ. Մեկ այլ երկիր մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու նպատակով որևէ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց անօրինական մուտքը

դ. Որևէ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց անօրինական ելքը տվյալ երկրից

18. Իմիգրացիան.

ա. Մեկ այլ երկիր մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու նպատակով որևէ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց մուտքն է

բ. Որևէ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ելքն է տվյալ երկրից

գ. Մեկ այլ երկիր մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու նպատակով որևէ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց անօրինական մուտքն է

դ. Որևէ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց անօրինական ելքն է տվյալ երկրից

19. Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումն ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի կոչվում է.

ա. Միգրացիա

բ. *Տարաբնակեցում*

գ. Տեղահանում

դ. Էմիգրացիա

20. Ծնվածների և մահացածների հարաբերությունը կոչվում է

ա. Միգրացիա

բ. Վերարտադրություն

գ. Բնական աճ

դ. Ուրբանիզացիա

21. Քաղաքները չեն դասակարգվում ըստ.

ա. Մարդաշատության

բ. Գործառույթի

գ. *Սեռատարիքային կազմի*

դ. Նշվածներից ոչ մեկով

22. Արդյունաբերության ճյուղերը ըստ ծագման ժամանակաշրջանի բաժանվում են.

ա. Հնագույն, հին, նոր

բ. *Հին, նոր, նորագույն*

գ. Նոր, նորագույն, անցումային

դ. Հին, միջին, նոր

23. Ամբողջ աշխարհի տնտեսական միասնական համակարգը կոչվում է.

ա. Ազգային տնտեսություն

բ. Տնտեսության միավորում

գ. Համաշխարհային տնտեսություն

դ. Համախառն ներքին արդյունք

24. Տոկոսը որպես չափման միավոր.

ա. Հաստատուն է

բ. Հարաբերական է

գ. Ամբողջական է

դ. Նշվածներից ոչ մեկը

25. Մեծությունների հարաբերակցության ներկայացումը շրջանի մասերի միջոցով կոչվում է.

ա. Շրջանի մակերես

բ. Շրջանի սեկտոր

գ. Շրջանաձև դիագրամ

դ. Շրջանի աղեղ

26. Այն իրադարձությունները, որոնք որոշակի պայմանների առկայության դեպքում կարող են տեղի ունենալ կամ տեղի չունենալ, կոչվում են.

ա. Հավաստի իրադարձություններ

բ. Անհնար իրադարձություններ

գ. *Պատահույթներ*

դ. Նշվածներից ոչ մեկը

27. Պատահական փորձի յուրահատկությունը հետևյալն է.

ա. Այն ունի բազմակի ելքեր

բ. Այն կարելի է կրկնել ցանկացած քանակությամբ

գ. *Այն ունի բազմակի ելքեր և կարելի է կրկնել ցանկացած քանակությամբ*

դ. Այն ունի միայն մի ելք

28. Պետության խորհրդանիշ է հանդիսանում.

ա. Դրոշը

բ. Զինանշանը

գ. Օրհներգը

դ. Բոլոր թվարկվածները

29. Երբ մարդիկ սխալ են ընկալում միմյանց, գնահատականներ են տալիս կամ վիրավորում են միմյանց, որոշակի մականուններ տալիս միմյանց, դա կոչվում է.

ա. Պիտակավորում

բ. Խտրականություն

գ. Տարբերություն դնել

դ. Կոնֆլիկտ

30. Սովորությունները

ա. *Մարդկանց կողմից շարունակաբար կրկնվող գործողություններն են*

բ. Մարդկանց կողմից չընդունված նորմեր են

գ. Ամրագրված նորմեր և կանոններ են

դ. Ճիշտ պատասխանը բացակայում է

31. Թղթադրամներն առաջին անգամ օգտագործվել են.

ա. Հնդկաստանում

բ. Չինաստանում

գ. Ճապոնիայում

դ. Թուրքիայում

32. Գովազդ իրականացվում է, որպեսզի.

ա. Մարդկանց մոտ գնելու ցանկություն առաջանա

բ. Մարդիկ տեղեկանան ապրանքի մասին

գ. Մարդիկ տեղեկանան ապրանքի առավելությունների մասին

դ. Բոլոր վերը թվարկվածները

33. Բնակչության վերարտադրության գործընթացը տեղի է ունենում բացառապես բնակչության.

ա. Ծնելիության միջոցով

բ. Մահացության միջոցով

գ. Բնական շարժի միջոցով

դ. Միգրացիայի հաշվին

34. Նշվածներից ո՞րը մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքի տեսակ չէ.

ա. Կյանքի իրավունք

բ. Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք

գ. Ազատության և անձեռնմխելիության իրավունք

դ. *Կրթության իրավունք*

35. Հանրային է այն բարիքը, որը.

ա. *Կարող է սպառվել բոլորի կողմից՝ առանց հավելյալ ծախսի*

բ. Եթե օգտագործվում է մի անդամի կողմից, բացառում է դրա միաժամանակյա սպառումը մյուսների կողմից

գ. Նախատեսված է բոլորի համար (մրցակցային չզատվող)

դ. Նախատեսված է օգտագործման որոշակի կանոնների համաձայն (ոչ մրցակցային զատվող)

36. Վերարտադրության ռեժիմը պայմանավորված է.

ա. Ծնելիությամբ

բ. Մահացությամբ

գ. *Ծնելիության և մահացության ցուցանիշների տարբերությամբ*

դ. Միգրացիայով

37. Այն դեպքում, երբ ծնելիության և մահացության ցուցանիշները հավասարվում են, մենք գործ ունենք.

ա. Ընդլայնված վերարտադրության հետ

բ. Նեղացված վերարտադրության հետ

գ. *Պարզ վերարտադրության հետ*

դ. Նշվածներից ոչ մեկի հետ

38. Սոցիալական խումբը.

ա. Մարդկանց յուրաքանչյուր համախմբությունն է

բ. Մարդկանց համախմբություն է, ովքեր ժամանակ առ ժամանակ համագործակցում են

գ. Մարդկանց միավորում է, որտեղ խմբի անդամները որոշակի միասնական նպատակի հասնելու համար համագործակցում են

դ. Ճիշտ պատասխանը բացակայում է

39. Աշխատանքը մարդու նպատակասլաց գործունեությունն է, որի ընթացքում սպառվում են մարդու.

ա. Ֆիզիկական ունակությունները

բ. *Աշխատուժը*

գ. Գիտելիքները

դ. Թվարկվածներից ոչ մեկը

40. Պահանջարկի փոփոխության, ինչպես նաև նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման շնորհիվ բարիքների արտադրության կառուցվածքն անընդհատ փոփոխվում է: Դրա հետևանքով առաջանում է գործազրկության տեսակներից մեկը, որը կոչվում է.

ա. Պարբերաշրջանային

բ. Հպանցիկ

գ. *Կառուցվածքային*

դ. Պարզ

41. Կարգավիճակով պայմանավորված վարքը կոչվում է.

ա. Սոցիալական ինստիտուտ

բ. Սոցիալական նորմ

գ. Սոցիալական կարծրատիպ

դ. Սոցիալական դեր

42. Դավիթ Անհաղթը մարդուն սահմանում էր.

ա. Որպես սոցիալական էակ

բ. Որպես մահկանացու, բանական, մտածելու ընդունակ էակ

գ. Որպես բարոյական արժեքների կրող

դ. Որպես մշակույթի տարր

43. Արիստոտելը մարդուն սահմանում էր.

ա. Որպես սոցիալական կենդանի

բ. Որպես մահկանացու, բանական, մտածելու ընդունակ էակ

գ. Որպես բարոյական արժեքների կրող

դ. Որպես մշակույթի տարր

44. “Հասարակություն” բառով կարելի է կոչել.

ա. Միայն նույն պետության տարածքում բնակվող մարդկանց համախմբությունը

բ. Մարդկանց համատեղ կենսագործունեության կամ համակեցության պատմական բոլոր ձևերը

գ. Միայն նույն լեզվով խոսող մարդկանց բազմությունը

դ. Նշվածներից ոչ մեկը

45. Վերբալ հաղորդակցությունը տեղի է ունենում.

ա. Միայն գրավոր

բ. Միայն բանավոր

գ. Գրավոր և բանավոր

դ. Նշվածներից ոչ մեկը

46. Սոցիալական խումբը բաղկացած է.

ա. 2 և ավելի անձանցից

բ. Նվազագույնը 5 հոգուց

գ. Առավելագույնը 20 անձանցից

դ. Մեկ անձը կարող է համարվել սոցիալական խումբ

47. Ինքնությունը կարող է լինել.

ա. Անհատական

բ. Ազգային

գ. Հասարակական

դ. Բոլոր նշված պատասխանները ճիշտ են

48. Նշվածներից որը ժողովրդավարական արժեք չէ.

ա. Ազատ և արդար ընտրություններ

բ. Հանրային բոլոր որոշումներն ընդունվում են մեծամասնության կամքով

գ. Բոլոր քաղաքացիներն օրենքի առջև հավասար են

դ. Ընտրված նախագահի լիազորություններն անսահմանափակություն

49. Անմիջական ժողովրդավարությունը արդյունավետ է.

ա. Փոքրաթիվ մարդկանց խմբերում

բ. Մեծաքանակ մարդկանց խմբերում

գ. Անմիջական ժողովրդավարությունը արդյունավետ չէ և ոչ մի պարագայում

դ. Ճիշտ պատասխանը բացակայում է

50. Ներկայացուցչական ժողովրդավարության դեպքում ո՞րը ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչների գործառույթ չէ.

ա. Քաղաքական որոշումների ընդունում

բ. Հեղափոխության նախապատրաստում

գ. Օրենքների, որոշումների և այլ իրավական ակտերի մշակում

դ. Ծրագրերի կազմում և իրականացում